

Վարչակարգի վերջին հույսը խորհրդարանը ցրելն է

Միսլ է մտածել, թե գործող վարչակարգի առավել բարձրաստիճան պաշտոնյաները լավ չեն գիտակցում, թե օրգանական ծագումով ինչ անհարմար միջավայրում են իրենք հայտնվել: Բայց եղածը եղած է, եւ փրփուրներին անգամ ձեռք գցելը, տվյալ դեպքում, պարզապես քմահաճույքի հարց չէ, այլ՝ ինքնապաշտպանության բնագոյի հրամայական պահանջ: Ադրբեջանում նախագահական ընտրություններից հետո, աշխարհով մեկ հարձակման անցած ատլանտները բռնելու են պաշտոնական Երեւանի կոկորդից եւ ծագումնաբանական առասպելաբանությունից ծնունդ առած հոխորտանքը, որ այդչափ արդյունավետ է երկրի ներսում, արտաքին ուժերի պարագայում չի գործելու: Իսկ պատմականորեն այնպես է ստացվել, որ գործող վարչակարգը պարտավոր է նվազագույնը նույն արդյունավետությունը ցուցաբերել, ինչ ցուցաբերեցին Տեր-Պետրոսյանն ու Ալեքսանդր Արզումանյանը Կոպենհագենում, եւ դրանից ոչ մի աստիճան պակաս: Բայց հազարամյակներ առաջ արդեն ասված է, որ «այն, ինչ կարելի է Չեւսին, հասու չէ...», եւ, ուստի, վարչակարգը ստիպված է գոնե ժամանակավոր լուծումներ գտնել, քանզի անգամ Կոպենհագենը նրա համար այլեւս անհասանելի բարձունք է:

Հեղաշրջում իսկապես պետք չէր անել, որովհետեւ հենց փետրվարյան հեղաշրջումն է, որ վարչակարգի, առանձնապես՝ Ռոբերտ Քոչարյանի թիկունքում մի աներեւույթ, բայց բավական անանցանելի սահմանագիծ է քաշել, զրկելով նրան ոչ միայն նահանջի, այլեւ խուսանավելու հնարավորությունից:

Տեսականորեն, իհարկէ, Վարդան Օսկանյանի առողջ երեւակայությունը (զգացվում է սիրիական անապատի ու հեքիաթային Պալմիրայի ստեղծագործածի ազդեցությունը) դեռ կարող է նոր բառախաղեր ստեղծել, ասենք, «Լեռնային Ղարաբաղը պետք է լինի, որպեսզի չլինի, եւ լավ կլինի, որ չլինի լինելու կարգավիճակով, եւ մենք համաձայն ենք, որ նա լինի չլինելու պայմանով» տարբերակով, բայց աշխարհաքաղաքական բարդ զարգացումների այս փուլում հայկական մանկամտուրի անհողաբաշխ բարբաջանքը չի ընկալվելու: Արեւմուտքն, ինչպէս եւ Ռուսաստանը, հստակություն են պահանջելու, բայց առաջինը՝ նաեւ խիստ կոնկրետ գործողություններ: Եվ որպեսզի այդ պահանջները կատարվեն, Քոչարյանը ստիպված է լինելու ասպարեզից հեռացնել Վազգեն Սարգսյանին, հանրապետական-երկրապահներին, Սամվել Բաբայանին, ՀՅԴ այն մասին, որը չի կիսում Վահան Հովհաննիսյանի պատկերացումները հայրենասիրության եւ կուսակցության առաքելության վերաբերյալ: Ավելորդ է իսկ ասել, որ Արեւմուտքի առջեւ

երկնագույն դրոշ պարզած «Տիտանիկից» դուրս կլթոչեն նաեւ «ազգային միասնության» մանր-մունր հիմնասյունիկները:

Այնպէս որ, վարչակարգը ստիպված է ժամանակ ձգել, եւ դա հնարավոր է միայն նոր, հանկարծահաս ընտրությունների պատճառաբանությամբ: Միայն այս դեպքում է, որ ատլանտները մի երեք ամսով տարկետում կտան պաշտոնական Երեւանին: Կփրկի՞ դա այս վարչակարգը, թե ոչ, այլ հարց է: Ըստ մեզ, ա՛յս վարչակարգին այլեւս ոչի՛նչ չի փրկի, բայց փոխարենը երկիրն ու նրա բնակիչները կենթարկվեն հավելյալ ծանր փորձությունների: Նկատո՞ւմ են արդո՞ք դա խորհրդարանականները, թե ոչ, բայց համապատասխան մեխանիզմներն արդեն գործի են գցված: Վարչակարգի վերահսկողության տակ գտնվող քարոզչամիջոցները, առանձնապէս՝ էլեկտրոնային միջոցները, ջանք չեն խնայում Ազգային ժողովի պատգամավորներին ու նրանց գործունեությունը վարկաբեկելու համար: Իսկ վերջին շրջանում գործընթացին միացավ ծանր հրետանին՝ անձամբ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Ալեքսանդր Հարությունյանը, որն իր պաշտոնական անհաս բարձունքից շանթ ու կայծակ թափեց առանձին պատգամավորների վրա:

Ազգային անվտանգության պաշտպանության վերաբերյալ պարոն Հարությունյանի յուրօրինակ պատկերացումները թողնենք նրա խղճի վրա եւ նշենք միայն, որ նրա մասնակցությունը հակախորհրդարանական խաչակրաց արշավանքին վկայում է վարչակարգի մտադրությունների լրջության մասին:

Մի էական մանրամասն եւս: Վերջին շրջանում Երեւանի թաղերում արագընթաց վերածնունդ է ապրում քրեական էլեմենտը: Երեւույթ, որը կարծես թե անդառնալի անցյալ էր դարձել Վանո Սիրադեղյանի՝ նախարար աշխատելու ընթացքում: Կրիմինալը կրկին ջրի երես է դուրս եկել եւ, ավանդական մեթոդաբանությամբ անթափանց ցանց է հյուսում տնտեսվարող սուբյեկտների եւ ողջ բնակչության գլխին:

Պետք է ենթադրել, որ առաջիկա խորհրդարանական ընտրությունները, երբ էլ որ դրանք տեղի ունենան, այլեւս կարգավորվելու են թաղային կրիմինալի կողմից: Առայժմ դժվար է ասել՝ հրահանգավորված է արդո՞ք քրեականների վերածնունդը ՆԳ եւ ԱԱ նախարարությունից, թե՞ ընդամենը տեղական ինքնակառավարման մարմինների ինքնագործունեության արդյունքն է, բայց հարցերի պատասխանները իրենց երկար սպասել չեն տա՝ կապված երեւույթի նկատմամբ իրավասու մարմինների ցուցաբերած դիրքորոշման հետ:

Հոկտեմբերի 7, 1998

